

ՎՈՒՄՐԻ, ՍԱԿՈՒ ԵՎ ՂԱՏՈՒՆ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒՒԲԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

ՋՈՆ Ա. Բ. ԿՐԵՊԻՆ (ԱՄՆ)

Այս հոդվածում կքննվեն Ղումրի, սակո և Ղաճուն հայերեն թռչնառնները, որոնց աղբյուրը ճշգրիտ որոշված չէ։ Ղումրի բառի համար ենթադրվել է թուրքական ծագում. վերջին երկուսի համար, որոշ վերաուսույաժությամբ՝ արաբական ծագում։ Այս ենթադրությունները կասկած են հարուցում։

Ղումրի, սակո և Ղաճուն բառերի պարսկական ծագումը հնարավոր չի համարվել պարզապես այն պատճառով, որ հայագետների տրամադրության տակ չեն եղել պարսկերեն բնագրեր, որոնց մեջ գործածված լինեին այդ բառերը։ Դրանք սովորաբար չեն նշվում նաև պարսկերեն լեզվի բառարաններում։ Բնչևիցե, բառարանագիրների ուղղորդությունից հաճախ որոշ բառեր վրիպում են և ժամանակ առ ժամանակ ի հայտ են գալիս բառարաններում տեղ չգտած բառեր։

Հայտնի է, որ Համդուլլահ Մուստուֆի Ղադվինիի «Նուզհաթ-ալ-կուլուբը» չի ուսումնասիրված։ Այդ աշխատությունը, որ թվագրվում է 1341—1342 թթ. (հիշրի 740), կարելի է համարել բնական գիտությունների հանրագիտարան։ Երկը բաղկացած է երեք բաժիններից (մաքալա)։ 1) օգտակար հանածոներ, բուսական և կենդանական աշխարհ, 2) մարդը՝ տարբեր հայեցակետերից դիտված, 3) աշխարհագրություն։ Ընադիրը մեծ կարևորություն ունի այն տեսակետից, որ շատ դեպքերում գործածված տերմինները դժվար է դիտել իբրև դասական պարսկերենում սովորաբար հանդիպող բառաին իրականություններ։ Համդուլլահ Ղադվինիի գործածած շատ տերմիններ հայտնի են արաբերենից, բայց, ակնհայտորեն, սովորական չեն կանոնական տեքստերի համար։

Առաջին բաժնի վերջին մասում՝ նկարագրված են շատ կենդանիներ, որոնցից 70-ը «օդային կենդանիներ» են։ 70-ից մեկը շղիկն է, մի քանիսը միջատներ են, իսկ մյուսները՝ առասպելական թևավոր արաբաժներ։ Սակայն հիմնականում դրանք թռչուններ են և այստեղ է, որ կարող էին գտնվել հայերեն Ղումրի, սակո և Ղաճուն բառերի պարսկերեն նախատիպերը, մի աղբյուր, որը կարող է բացառել արաբական կամ թուրքական ծագում կանխադրելու հնարավորությունը։

Հայերեն սակո-ն, ըստ Աճառյանի և Հյուբշմանի, ծագում է արաբերեն *سكوت*-ից։ Սակո-ը բաղբի մի տեսակ է, որ ռուսերեն կոչվում է *балобан* (Falcon cherrug)։ Սակոյն ամենևին էլ սովորական չէ հայերենում։ Այն բերվում է նոր Հայկազյան բառարանում, որտեղ հղում է արվում Մխիթար Գոշի 121-րդ առակին, ուր գործածված է այդ բառը. «Ի տօնի սրբոյ զատկին եկին թռչունք

1. Թռչնաբանությանը վերաբերող մասը հրատարակվել է առանձին, որ թարգմանվել է անգլերեն և ծանոթագրվել Ժ. Ստեֆենսոնի կողմից «The Zoological Section of the Nuzhat-ul qulub», հրատարակվել է 1928 թ. Լոնդոնում, Royal Asiatic Society-ի կողմից։

ամենայն, և խոստովանութեամբ հաղորդէին օրինացն. և կին ընդ նոսա սակու և հողամաղ, և խոստովան եղեն քահանային, եթէ ոչ այլինչ դիտեմք խիղճ, այլ զի որսացաք մկունս և գորտունս և կերաք»:

Հայերեն այս բառի պարսկերեն համարժեքը «նուզհաթ-ալ-կուլուր»-ում պարզորոշ նշանակում է բազե. «Շաքըր՝ բազեն, թուրքերը կոչում են atalkū, իսկ մոնղոլները՝ talqān: Գիշատիչ թռչուն է»²:

Դասական պարսկերենում šaqr ձևն անսովոր է, քանի որ Falco cherrug-ի համար սովորական է 𐭪𐭩𐭪𐭩𐭪 balaban բառը³: Հավանական է, որ պարսկերեն šaqr-ը եղել է խոսակցական, ոչ պրական ձև: Šaqr ձևի գոյությունը «նուզ-հաթ-ալ-կուլուր»-ում հավաստի վկայություն է, որ այն իրոք գործածվել է պարսկերենում balaban-ի իմաստով և հայերենը փոխառել է պարսկերենից:

Երկրորդ բառը դահուճ-ն է: Այս տերմինի համար ես ոչ մի բնագրային աղբյուր չունեմ միջնադարյան հայ մատենագրության մեջ, բայց հանդիպում է ժամանակակից լեզվում⁴: Դահուճը կաքավի մի տեսակ է: Ժամանակակից պարսկերենն ունի See-see, առսերեն՝ кypочка пyстынная (Ammoderdix griseogularis)⁵: Հայերեն բառը հանգեցվում է պարսկերեն 𐭪𐭩𐭪𐭩𐭪 (tīhū) ձևին, բայց սկզբնական կապը արաբերեն 𐭪𐭩𐭪𐭩𐭪 (tāihū) -ի հետ ցարդ չի նշվել⁶: Կապը գտնում ենք «նուզհաթ-ալ-կուլուր»-ում, որտեղ հետևյալն է ասված. «Թայհուջ, թայհու (սալամբ) միսը թուլլատրելի է ուտել, ջերմ է ու խոնավ, և շատ հաճելի համ ունի»⁷: Այսպիսով, կապը նոր պարսկերեն tīhū-ի և արաբերեն tāihū-ի միջև այժմ բացահայտված է և պարսկերենը կարող է համարվել այն աղբյուրը, որից ծագում է միջին հայերենի դահուճ-ը:

Ղումրի բառը, առարակ [ռուս. rопy.ица (Streptopelia turtur)], շատ է գործածվել միջնադարյան հայ պոեզիայում: Գոիգորիս Աղթամարցու մոտ կարդում ենք. «Քաղցր եղանակ է բլբուլն ու ղումրի»⁸. Հովհաննես Վարդապետը ղումրիին ներկայացնում է իբրև բարեպաշտ աղոթարար:

² Šaqr caghra torkān(e) atalku va moghulān(e) talqan xvanand jānvarī šekārī.

³ Այս թռչնի անվանումը շատ տարբերակներ ունի: Ամրողական ցուցակը տե՛ս D. C. Phillot-ի հրատարակած Bāz-nāme-yī-Nāsiri, էջ 49, „Two Treatises on Falconry“, London, 1908 (1968):

⁴ Դահուճ բառը բերվում է «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանում» (Երևան, 1969), որտեղ ճիշտ կերպով նույնացվում է սալամբի հետ:

⁵ D. A. Scott, H. M. Hamadani & A. A. Mirhosseyni, The Birds of Iran, Department of the Environment, Tehran, 1975. Այստեղ առաջին անգամ պարսկերեն լեզվով տրված է իրանական թռչունների ճշգրիտ տերմինաբանությունը, բերված են պարսկերեն տերմինների լատիներեն համապատասխանություններն ըստ Լիննեյի կրկնակ (բինոմինալ) անվանացանկի:

⁶ Հեղինակի ուղղորոշությունից վրիպել է Հ. Աճառյանի դիտողությունը դահուճ բառի արաբերեն և պարսկերեն համապատասխանությունների մասին: Աճառյանը գրում է. «Արաբ.

طيهوج tihūj կամ طيهوج tihūj, teyhūj, մի տեսակ թռչուն է, որ կամուս, թրք. թրգմ. Ա. 420 մեկնում է թրք. cllquşə և համարում է պրս. 𐭪𐭩𐭪𐭩𐭪 tihū հոմանիշից արաբացեալ» (Հ. Աճառյան, Հայերեն արժատական բառարան, Երևան, 1971, էջ 616): (Ծնթ. թարգմանչի):

⁷ Tāihūj, tīhū mākulullahm āst; va gūsteš garm va tar va saxt(e) xuš(e) ta'am būd.

⁸ Գոիգորիս Աղթամարցի, Ուսումնասիրություն, քննական բնագրեր և ծանոթագրություններ Մայիս Ավդալբեկյանի, Երևան, 1963, էջ 253:

Ղումրի անրեժ աղօթարար,
 Զճաշու սաղմոսն ասէր երկար.
 Անձն է հանդել կարմիր շուրջառ,
 Զինչ քահանայ հանդարարար⁹:

Թյկուրանցին¹⁰ գովերգում է Ղումրիի ձայնը. «Ղումրի ունին յայժ քաղցր ձայն»¹¹:

Երևելից ալմ զումրին նույնացվել է թուրքական ծագման kumru բառի հետ¹², որն ալմելի բան անհավանական է: Եվ, չնայած բառը լավ հայտնի է պարսկերենում, նրա կիրառությունը ժամանակի դասական տեքստերում անսովոր էր: Համդուլահ Ղազվինին վկայում է վաղ շրջանի ստույգ գործածությունը: «Ղումրին հայտնի է: Այն հաճելի ձայն ունեցող և բարեգուշակ թռչուն է»¹³:

Համդուլահ Ղազվինիի տեքստը մեզ հիմք է տալիս առաջադրելու երեք նոր ստուգաբանություն: Նկատի ունենալով հայերենում պարսկական ծագման թռչնանունների նշանակալի բանակը¹⁴, բնական է, որ նման ծագում փնտրվի նաև այս բառերի համար:

Համդուլահ Ղազվինիի տեքստի թռչնագիտական բաժնի կապակցությամբ կարելի է անել մի դիտողություն ևս, չնայած դա չի վերաբերում ստուգաբանությանը: «Uqāṣ «արծիվ» բառի բնությունն ժամանակահատվածում Համդուլահ Ղազվինին վկայակոչում է کاسر العظام (kasir-ul-‘izām) թռչնանունը, որը կարելի է թարգմանել իբրև «ոսկոր կոտրող»: Այն հանդիպում է հետևյալ տեքստում. «و چون بچه برآرد دورا نکاه دارد ویکی را شب افکند حق تعالی مرفی دیگر را بر گمارد تا آن بچه را بپرورد آت یروند»¹⁵ «... և երբ [արծիվը] լույս աշխարհ է բերում իր ձագերին, պահում է նրանցից երկուսին, իսկ մեկին ցած է գցում ժայռից. և Աստված (թող օրհնյալ լինի նրա անունը), հրամայում է մի ուրիշ թռչունի խնամել այդ մեկին, և այն թռչունը, որ պահում է արծվի ձագին, Կոչվում է kasir-ul-‘izām»):

Կա համանուն առասպել արծվի ձագերին խնամող «ոսկոր կոտրող» թռչունի մասին: Այդ առասպելը հայտնի է հայ գրականության մեջ, ինչպես նաև հունական և հռոմեական աղբյուրներում: Վանական վարդապետի մոտ կարդում ենք. «Այլ հաւ կայ, բրդոռ ասեն, որ զայն ձագն (ընկեցեալ յարծուոյ) առնու և սնուցանէ»¹⁶:

⁹ «Երկրագունտ» օրաթերթից, Պոլիս, 1884, N 2479:

¹⁰ Հոգի աննես Թյկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 165:

¹¹ էմ. Պիվազյանը (նույն տեղում, էջ 132) բերում է այս բառը նաև խումրի գրությունը:

¹² Ստ. Մալխասեանց, Հայերէն բացատրական բառարան, Երևան, 1944:

¹³ Qumri, ma'rufest morghi xuš(e) āvāz āst va mabārak.

¹⁴ Հմմտ. J. G r e p p i n, Persian Ornithological Terms in Classical Armenian, «Բազմավեպի» Մխիթար Սեբաստացուն նվիրված հոբելյանական հատորում:

¹⁵ Va čün bacceḥ berārad durā negah dārad va yekira bešīb āfkanad (baqqatā'āl) morghi(ye) dīgarra bar gomārad tā ān baččehra beparvarad. ān parvarandeh rā kāsir-ul-‘izām xvānand.

¹⁶ Հստ նոր Հայկազեան բառարանի:

Հունական հայրաբանական մի բնագրում՝ սբ. Բարսեղի «Վեցօրեայք»-ում, մի հատված ձգրտորեն համապատասխանում է և՛ Համդուլահ Ղազվինիի, և՛ Վանականի տեքստին. 'Αλλ' οὐκ ἐξ ὀψέων (αἰέτων). ὡς φασί, διαφθαρῆναι τὴ φρυγί, ἀλλ' ὑπερβύβασα πύτων τοῖς ὀνείοις ἐσπότης νεοσσούς πονεχτρεῖσι.¹⁷ «Բայց ինչպես ասում են, ֆրյգի-ն չի թողնում նրան (արծվին) կորչելու, այլ տանում է նրան և մեծացնում իր ձագերի հետ միասին»:

«Ոսկոր կոտորող» տերմինը հանդիպում է նաև լատիներեն մի բնագրում ossifragus ձևով: Իսիդորի Etymologiae-ի մեջ (12. 7. 59) կարդում ենք. «Ossifragus vulgo appellatur avis quae ossa ab alto dimittit et frangit. Unde et a fragendo ossa nomen accepit». «Ossifragus-ը մի թռչուն է, որ այդպես է կոչվում շատերի կողմից: Նա ոսկորները բարձր տեղից ներքև է գցում և չարդում, և այսպիսով ոսկոր կոտորիչուց, ստացել է իր անունը»:

Թոմսոնը¹⁸ նույնացնում է հուն. ֆրյգի և լատ. ossifragus (ossifraga. որպես գառնանկղ՝ lammergeyer (ռուս. бородач կամ ягнятник [Gypaëtus barbatus]):

Եթե մենք կարողանանք հայ. բրդոռ-ը կապել բրդեմ արմատի հետ (հուն. πέρδιω «քանդել», սկր. bardhaka- «կտրել», հ.-ե. *bherdh-), այդ դեպքում կարող ենք ասել, որ գառնանկղի և արծվի անվանությունը պահպանվել է ոչ միայն Հունաստանում և Հռոմում, այլև հայ և պարսկական մշակույթների մեջ: Եվ այնուհետև մենք կարող ենք ենթադրել, որ Համդուլահ Ղազվինիի kāsir-ul-'izām-ը գառնանկղի անվանումներից մեկն է:

ЭТИМОЛОГИИ СЛОВ ГУМРИ, САКР И ДАХУС

ДЖОН А. К. ГРЕЙПИН (США)

(Резюме)

В статье делается попытка на основании данных «Nuzhat-ul-qulub'a» Хамдуллаха Казвини уточнить этимологии армянских названий птиц гумри, сакр и дахус, возводимых к персидским корням.

¹⁷ Բարսեղ ԿԷՍԱՐԱՅԻ, Վեցօրեայք, Ճառ Ը, տե՛ս Migne, Patrologia Graeca, vol. 29, էջ 117. Ինքնական հրատարակությունը ֆրանսերեն թարգմանությամբ պատրաստել է S. Giet, Basile de Césarée, Homélies sur l'Hexaéméron, Paris, 1968.

¹⁸ D'Arcy W. Thompson, A Glossary of Greek Birds, Oxford, 1936.